


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



**2018 ԹՎԱԿԱՆԻ  
ՊԵՏԱԿԱՆ  
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ  
ԾՐԱԳԻՐ**

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը «Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի և «Հայաստանի Հանրապետության 2016-2018 թվականների պետական վիճակագրական աշխատանքների Եռամյա ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով սահմանված պահանջներին համապատասխան, մշակել է «**2018 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը**»:

Հայաստանի Հանրապետության տարածքում պետական վիճակագրության իրագործման հիմքը պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրն է: Պետական վիճակագրական գործունեության ուղղությունները սահմանելու համար մշակվում է **Եռամյա Ծրագիր**, իսկ այդ ուղղությունների իրագործումն ապահովող միջոցառումների որոշման համար՝ **Տարեկան Ծրագիր**:

**Եռամյա Ծրագիրը** հաստատվում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացմամբ: Այն ներառում է պետական վիճակագրական գործունեության հիմնական ուղղություններն ըստ երկրի տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և բնապահպանական բնագավառների: Եռամյա և տարեկան ծրագրերով նախատեսված աշխատանքների ֆինանսավորումը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասով, իրականացվում է յուրաքանչյուր տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությանը նախատեսված հատկացումների շրջանակում:

Համաձայն «Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, **Տարեկան Ծրագիրը** (այսուհետ՝ **Ծրագիր**) հաստատվում է Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի կողմից՝ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության նախագահի ներկայացմամբ:

**Ծրագիրը** ներառում է երկրի տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և բնապահպանական իրավիճակի դիտարկման համար անհրաժեշտ վիճակագրական տեղեկատվությունը՝ հաշվի առնելով առկա ռեսուրսների սահմանափակումները, վիճակագրական տեղեկություններ տրամադրողների վրա դրվող պարտականությունների ծավալը և ծախսերի արդյունավետությունը:

**Ծրագիրը** սահմանում է Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության, ինչպես նաև մյուս պետական մարմինների՝ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից ընդհանուր համակարգման միջոցով իրականացվող պետական վիճակագրական դիտարկումներում ընդգրկված ցուցանիշների (և դրանց հավաքագրման, մշակման, ամփոփման, հրապարակման աշխատանքների) ցանկը, ինչպես նաև դրանց հաշվարկման կատարելագործմանն ուղղված աշխատանքները:

**Եռամյա և Տարեկան ծրագրերով** նախատեսված գործունեության ուղղություններն ու միջոցառումները հաշվի են առնում երկրի ցուցանիշների համադրելիությունը միջազգային վիճակագրական չափանիշներին, երկարաժամկետ միջակայքում միտումները բացահայտելու տեսանկյունով ապահովում են դրանց հնարավոր կայուն

պարբերականությունը և տարեկան կտրվածքով պետական վիճակագրությանը հատկացվող ռեսուրսների հետ համաչափությունը:

**Ծրագիրը** մշակվում է վիճակագրական տեղեկատվության սպառողների պահանջարկի ուսումնասիրության հիման վրա:

Երկրի ազատական տնտեսակարգին անցման պայմաններում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական վերափոխումները, տնտեսությունում տեղի ունեցող արագ տեղաշարժերը սկզբունքային անհրաժեշտություն են առաջացրել վիճակագրական տեղեկատվություն սպառողներին (օգտագործողներին) ապահովելու առավել ճշգրիտ, արժանահավատ և ժամանակի չափանիշներին համապատասխանող վիճակագրական հրապարակումներով:

Վիճակագրության կարևորագույն նպատակներից է սպառողներին (օգտագործողներին) շուկայի պահանջարկին համապատասխանող վիճակագրական արտադրանքի տրամադրումը:

Պետական վիճակագրական աշխատանքների կատարելագործմանն ուղղված միջոցառումներից են.

- միջազգային չափանիշներով վիճակագրական մեթոդաբանության կատարելագործման, միասնականացման և ներդաշնակեցման, այլ երկրների ազգային վիճակագրական ծառայությունների կողմից պաշտոնապես հրապարակվող իրենց երկրների սոցիալ-տնտեսական վիճակին և բնակչության կենսամակարդակին վերաբերող ցուցանիշների համադրելիության ապահովման նպատակով՝ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության շարունակական գործունեությունը միջազգային համագործակցության շրջանակում,
- վիճակագրության համակարգային զարգացման համար նախադրյալների ապահովման, վիճակագրության մեթոդաբանական կարողությունների զարգացման և կանոնակարգման, ինչպես նաև վիճակագրական տեղեկատվության օգտագործման ավելի լայն հնարավորությունների ընձեռման նպատակով՝ Արժույթի միջազգային հիմնադրամի Տվյալների տարածման հատուկ ստանդարտով սահմանված ցուցանիշների և դրանց մեթատվյալների պարբերական արդիականացման աշխատանքների ապահովումը,
- Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունում պարբերաբար կազմակերպվող սեմինար-խորհրդակցությունները և դասընթացները, ինչպես օտարերկրյա փորձագետների, այնպես էլ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակիցների դասավանդմամբ և (կամ) մասնակցությամբ,
- վիճակագրական տվյալների հավաքագրման, կուտակման, մշակման և տարածման բնագավառներում տեղեկատվական նոր տեխնոլոգիաների ներդրումը, արդիականացումը և կիրառումը (մեթատվյալներ, տվյալների հիմնապաշար, ինտրանետ, ծրագրային փաթեթներ և այլն),
- Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքէջում տեղադրված հրապարակումների տեղեկատվական բազայի կատարելագործումը, վիճակագրական տեղեկատվության սպառողների

համար Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքից առցանց ռեժիմով ամփոփ տեղեկատվության տրամադրման ուղղությամբ համապատասխան աշխատանքների իրականացումը,

- պետական վիճակագրությունում վիճակագրական դասակարգիչների մշակման ու ներդրման, ինչպես նաև արդեն իսկ ներդրված ու կիրառվող վիճակագրական դասակարգիչների շարունակական կատարելագործման աշխատանքների ապահովումը:

Վիճակագրական տեղեկությունների հավաքագրման արդյունավետության բարձրացման (ինչպես տվյալների որակի, այնպես էլ ռեսուրսների խնայողության ենթատեքստով), ինչպես նաև վիճակագրական տեղեկություններ տրամադրողների՝ վիճակագրական դիտարկման փաստաթղթերով ծանրաբեռնվածությունը նվազեցնելու նպատակով՝

- փոքր և գերփոքր ձեռնարկատիրության սուբյեկտներից ընտրանքային կարգով վիճակագրական տեղեկությունների հավաքագրման մեթոդների ավելի լայն կիրառումը,
- Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն ներկայացման (տրամադրման) ենթակա վիճակագրական փաստաթղթերի (պետական վիճակագրական հաշվետվություններ, հետազոտությունների հարցաթերթեր, դիտարկումներին վերաբերող այլ փաստաթղթեր և տեղեկանքներ) էլեկտրոնային եղանակով (էլեկտրոնային փոստով) ներկայացման հնարավորության ընդլայնումը,
- տնտեսական գործունեության տեսակների ու դրանք իրականացնող սուբյեկտների քանակի աճով պայմանավորված, վարչական ռեգիստրների և կիրառվող մեթոդաբանությունների շարունակական կատարելագործման աշխատանքները,

Վիճակագրական տեղեկատվության մատչելիությունն ապահովելու նպատակով.


- երկրի սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող վիճակագրական տեղեկատվությունը տարածվում է (անվճար) բազմաթիվ սպառողների (պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, հասարակական, գիտակրթական, ֆինանսական կազմակերպություններ, գործարար համայնք, զանգվածային լրատվամիջոցներ, միջազգային կազմակերպություններ և այլն), այդ թվում՝ մամուլի հաղորդագրությունների տեսքով՝ համաձայն Ծրագրի հավելված 3-ում նշված ժամանակացույցի,
- **Ծրագրի** 3-րդ հավելվածում ներառված վիճակագրական հրապարակումները (թղթային) տրամադրվում են Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության գրադարանին,
- Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքում հայերեն, ռուսերեն և (կամ) անգլերեն զետեղվում է վիճակագրական տեղեկատվությունը:

Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունն ապահովում է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին համապատասխան վիճակագրական տեղեկատվության տրամադրումը միջազգային (միջպետական, միջկառավարական) կազմակերպություններին և օտարերկրյա պետություններին, ինչպես նաև տվյալ տարվա ընթացքում ձեռքբերված

պայմանավորվածությունների հիման վրա՝ նոր հետազոտությունների և այլ վիճակագրական աշխատանքների իրականացումը:

**Ծրագրում** ներառված աշխատանքների (ցուցանիշների) կառուցվածքը ներկայացված է համաձայն Արժույթի միջազգային հիմնադրամի Տվյալների տարածման ընդհանուր համակարգի և Տվյալների տարածման հատուկ ստանդարտի (որին 2003 թվականի նոյեմբերի 7-ից անդամակցում է նաև Հայաստանի Հանրապետությունը) բաղադրիչների և ենթադրում է տվյալների տարածման հետևյալ 4 հիմնական պահանջների (չափորոշիչների) պահպանումը՝ տվյալների ընդգրկվածություն, պարբերականություն և ժամանակայնություն, մատչելիություն, ամբողջականություն ու որակ:

**Ծրագրի** 1, 11 և 12-րդ հավելվածներում, աշխատանքների (ցուցանիշների) արտացոլման համար օգտագործվել է վեցանիշ ծածկագիր, որտեղ.



- **I նիշը**՝ աշխատանքի (ցուցանիշի) ծածկագիրն է ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի Տվյալների տարածման ընդհանուր համակարգի և Տվյալների տարածման հատուկ ստանդարտի հատվածների,
- **II նիշը**՝ հատվածի տրոհումն է ըստ ենթահատվածների,
- **III նիշը**՝ աշխատանքի (ցուցանիշի) տրոհումն է ըստ ոլորտների (Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի դասերի, ցուցանիշների),
- **IV նիշը**՝ ոլորտների մանրամասնեցումն է ըստ ենթաոլորտների:

**Հաջորդ երկու նիշերը** հատկացված են պետական վիճակագրական աշխատանքների հերթական համարին՝ ըստ տվյալ հատվածի, ենթահատվածի, ոլորտի և ենթաոլորտի:

Այն դեպքում, երբ աշխատանքը (ցուցանիշը) տվյալ մակարդակից ներքև չի տրոհվում՝ հաջորդող դիրքերը լրացվում են զրոներով:

Օրինակ՝ Հավելված 1-ի 127003 - ծածկագիրը նշանակում է իրական հատվածի (1), արտադրության ենթահատվածի (2), կազմակերպությունների տնտեսական գործունեության (7), կազմակերպությունների տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշները (0), իսկ վերջին երկու նիշերն արտահայտում են նշված ցուցանիշներին առնչվող պետական վիճակագրական աշխատանքների ցանկում հերթական համարը, որոնք անփոփոխելի են:

Տվյալ ծածկագրի համար **Ծրագրում** նշվում են նաև վիճակագրական աշխատանքի (ցուցանիշի) ամբողջական անվանումը (սյունակ 3), տվյալ աշխատանքի (ցուցանիշի) իրականացման (հաշվարկման, հավաքագրման) հիմք հանդիսացող պետական վիճա-

կագրական դիտարկման փաստաթղթ(եր)ի տեսակ(ներ)ը (սյունակ 4), ընդգրկվածությունն ըստ կոնկրետ չափորոշիչի (մարզերի, գործունեության տեսակների և այլն) (սյունակ 5), պարբերականությունը (սյունակ 6), աշխատանքի կատարման, ցուցանիշի մշակման ավարտը (սյունակ 7), ինչպես նաև այն վիճակագրական հրապարակումների ծածկագրերը (տես՝ հավելված 3), որոնցում վերջիններս արտացոլվելու են (սյունակ 8):

**Ծրագրի 3, 9** հավելվածներում վիճակագրական հրապարակումների համար օգտագործվել է յոթանիշ ծածկագիր, որտեղ I-IV նիշերը համապատասխանում են Ծրագրի 1-ին հավելվածի դասակարգմանը, V նիշը ներկայացնում է հրապարակման ծածկագիրը (մասնավորապես՝ վիճակագրական ժողովածու (1), վիճակագրական տեղեկագիր (2), մամուլի հաղորդագրություն (3), տեղեկատվական ամսական զեկույց (4), վիճակագրական զեկույց (5)), իսկ VI և VII նիշերը ցույց են տալիս դրանց հերթական համարը:

**Ծրագրի 10-րդ** հավելվածում ներկայացված վիճակագրական աշխատանքներում (ցուցանիշներում) արտացոլված են նաև այն աշխատանքները (ցուցանիշները), որոնց կատարումը, ըստ էության, Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի մարզային և Երևան քաղաքի գործակալությունների կողմից տվյալների հավաքագրումն է և ամփոփումը: Այդ առումով, վերոհիշյալ հավելվածում առկա են Հավելված 1-ի աշխատանքների (ցուցանիշների) կրկնություններ՝ ըստ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի մարզային և Երևան քաղաքի գործակալությունների կողմից դրանց կատարման բովանդակային և ժամկետային պարտավորությունների մանրամասնումներ:

Վիճակագրական աշխատանքների կատարման (ցուցանիշների մշակման) **Ծրագրում** սահմանված ավարտի օրերը պարունակում են որոշակի վերապահումներ, կախված տարվա օրացուցային օրերի աշխատանքային օրերին համընկնելու հանգամանքից (օրինակ՝ Հավելված 1-ում 1.Իրական հատվածի 1.2.Արտադրություն (ծառայություններ) ենթահատվածի 1.2.1.Արդյունաբերություն բաժնի 121012 ծածկագրով աշխատանքի ավարտի օրը սահմանված է հաշվետու ժամանակաշրջանից հետո 20-րդ օրը):

Եթե որևէ աշխատանքի ավարտի օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվան, ապա աշխատանքի ավարտի օր է համարվում հաջորդ աշխատանքային օրը, իսկ ամսվա վերջին օրվա (օրինակ՝ 30/31 ձևաչափի) ժամկետայնություն ունեցող պարբերականությամբ աշխատանքների համար՝ ժամկետի ավարտի ամսվա վերջին աշխատանքային օրը:

*Վիճակագրական տեղեկատվության սպառողների պահանջարկն ուսումնասիրելու նպատակով՝ Ծրագրի նախագիծն առաջարկությունների և դիտողությունների սրացման ակնկալիքով տեղադրվել է Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության ( <http://www.armstat.am> ) պաշտոնական կայքում, ինչպես նաև կարծիքի է ներկայացվել ընտրանքային կարգով ընտրված (ֆինանսական միջոցների սղությամբ պայմանավորված) 135 հիմնական վիճակագրական տեղեկատվության սպառողների (պեպական մարմիններ, գիտակրթական հաստատություններ, դատարանական մարմիններ, բանկային համակարգ, գործարար շրջաններ, հասարակական և միջազգային կազմակերպություններ և զանգվածային լրատվամիջոցներ):*

*Ծրագրի նախագծի առնչությամբ պատասխան-գրություններ սրացվել են 58-ից (42.9%): Առաջարկություններ և դիտողություններ ունեցել են 20 վիճակագրական տեղեկատվություն սպառողներ կամ նրանց 14.8 %ը:*